

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
№ 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիայի համար 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » համար 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԱՆՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ

Համակ դրամ եռայն դրկե հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խնայարարական ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ներքին միայն կը հրատարակուին անդր-
ջովիին կամ մասնաւոր:
Դասնուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ՇՈՒՐՋԸ

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Հարկ է ըսել թէ միայն կրօնքի ու-
սուցման մէջ չկայանար բարոյագիտու-
թիւնը, ինչպէս կը կարծեն մեր մէջ
չատ մը համբաւներու ներքոյ, ուսու-
ցիչը հոգեբանօրէն իրեն ծանօթ եղող
աշակերտը՝ յայտնի նպատակի եւ որոշ
զարգացման հասցնելու համար պէտք
է վարպետօրէն կարենայ գործածել շատ
մը միջոցներ զորս տղուն հոգեբանու-
թեան վրայ հիմնուելով եւ յառաջա-
դրած նպատակը ի նկատի ունենալով
ինքը անձամբ պէտք է հնարէ եւ գոր-
ծածէ. մէկ խօսքով՝ պէտք է որ ման-
կավարժ լինի որ գիտութիւն մը ըլլա-
լէ աւելի արուեստ մըն է: Այս աշխ
երեք պայմաններով, այսինքն հոգե-
բան, ընկերարան-բարոյագիտ եւ ման-
կավարժ լինելով է որ ուսուցիչ մը
այսօր ուսուցիչ է. իր դասախօսու-
առարկաներու մասին ունեցած հմուտ-
թիւնը թէեւ կարեւոր բայց երկրոր-
դական նշանակութիւն ունի, եւ ար-
դէն վերոյիշեալ պայմանները լրացնող
ուսուցիչ մը գոյութիւնը թէ այնքան հա-
րակ լինի որ այս տեսակետով ալ մեզ
չկարենայ գոհացնել: Այս բոլորը գիտ-
նալով վարժապետի մը արժէքը չափել
ու նշանակել շատ հեշտ է. անոր իր-
րեւ հոգեբան ներկայացուցած հմուտ-
թեան, իրրեւ ընկերարան-բարոյագիտ
ունեցած հայեացքներուն եւ իրրեւ ման-
կավարժ ցոյց տուած վարպետութեան
ծանօթանալով, կարող ենք այս կամ
այն կարծիքը յայտնել, եթէ միայն
մենք քննողներս՝ ապահով լինինք որ
իրրեւ չափ գործածած մեր հայեացնե-
րը աւելի գիտական, հետեւաբար ա-
ւելի ճշմարիտ եւ օգտակար են: Այս
ըսածներէս կը հետեւի որ քննադատը
նախ իր քննած առարկան լաւ ճանա-
չելու է, երկրորդ այդ մասին իր հաս-
տատուն համոզումներն ու կարծիքնե-
րը ունենալու է, հակառակ պարագա-
յին՝ Լաֆօնդէնի առակներուն մէջ շատ
մը սխալ հայեացքակէտերով տրտուշ-
ներ բարձող, քննադատութիւններ ը-
նող կենդանիներն ալ մեզի չափ տրա-
մախոտութիւն կուենան: Ուրեմն վար-
ժապետի ընտրութիւններն, ինչպէս
նաեւ քննադատութիւններն որոնք մեր
մէջ առաջին հանգիստած անհատին հաց
ուտելու պէս գիւրաւ եւ յաջողութեամբ
կատարելու գործերը կը համարուին,
վերոգրեալ հայեացքներու ծանօթու-
թեամբ պէտք է կատարուին, որպէս զի
նպատակայարմար եւ օգտակար լինին,
ապա թէ ոչ՝ ընտրողները ըստ բաղդի,
կոյրկոյրայն ընտրած պիտի ըլլան եւ
միշտ ծնողաց զգոհութեան, աշա-
կերտներու ալ վնասուելուն պատճառ

պիտի հանդիսանան. իսկ քննադատ-
ները պիտի խօսին ու պիտի գրեն ա-
ռանց արդիւնքի մը հասնելու՝ որովհե-
տեւ իրենք ալ չգիտեն ի՞նչ կըսեն եւ
ի՞նչ կուզեն: Եւ արդարեւ մեր մէջ
քննադատութիւնը ամենահեշտ բանն է
դարձել. առաջին գրիչ չարժողը ան-
արգել քննադատ է եւ քաղաքական
եւ տնտեսական եւ կրթական եւ այլ
հարցերուն. առանց որոշ հայեացակե-
տի, առանց ունէլ տատանչի (criterium)
կը չափեն ու կը կտրեն, կը գովեն ու
կը պարսաւեն, երբեմն նոյն իսկ կը շո-
ղորդուին ու կը զրպարտեն, իսկ այդ
բոլորէն իբր արդիւնք յառաջ կուգայ
ոչ թէ օգուտ, այլ բարեկրօնեան խառ-
նակութիւն ու չփոթութիւն: Ժամա-
նակը չէ՝ այլ եւս վերջ տալ այդ թե-
թեւմտութեան եւ քիչ մը աւելի լըրժ-
օրէն, գիտականօրէն վերաբերիլ մա-
նաւանդ կրթական հարցին պէս խիստ
կենսական, ժողովրդի ճակատագրին
վրայ ազդող խնդրի մը նկատմամբ:
Կարծեմ վարժապետէ մը այսօր անհրա-
ժեշտօրէն պահանջուելիք ծանօթու-
թիւններն ու յատկութիւնները իրենց
գլխաւոր գծերով մատնանիչ ըրած ա-
տենա՝ տեսակ մը ծրագիր ալ ներկայա-
ցուցի որու կրնան հետեւիլ ու օգտուիլ
ոչ միայն վարժապետ ընտրողները ի-
րենց ընտրութիւններու մէջ, այլ մա-
նաւանդ մեր բազմաթիւ քննադատնե-
րը իրենց քննադատութիւնները գրած
ատեն: Արդարեւ, ինչպէս ըսի, բա-
ւական է վարժապետին իբր հոգեբան
ունեցած հմտութեան, իբր ընկերա-
բան-բարոյագիտ ներկայացուցած հայ-
եացքներուն եւ իբր մանկավարժ ցոյց
տուած վարպետութեան ծանօթանալ
կարծիք յայտնելու համար, չմոռնալով
սակայն նկատի առնել մի քանի ուրիշ
պարագաներ ալ, օրինակի համար, այն
միջավայրը որու մէջ կուգուծ է գոր-
ծել, այն միջոցները որոնք իրեն ըն-
ծենուած են: Այս ուղղութեամբ մի-
այն հարկի է բան հասկցնել եւ օգ-
տակար հանգիստանալ. իսկ վերացական
դատողութիւններ, անհիմն ենթադ-
րութիւններ եւ նոյն իսկ անիմաստ
ու ծիծաղելի բացազանցութիւններ
փորձով գոնէ տեսնուեցաւ թէ վնաս
յոռաջանելէ դատ ուրիշ բանի դեզ
չեն: Անոնք որ չեն կրնար կամ չեն
ուզեր իրենց միջոցն ալ ըստ բոնած ուղ-
ղութիւնը փոխել՝ ապագուցած պիտի
ըլլան թէ իրենց նպատակը օգտակար
ըլլալէ աւելի անհատականութիւններ
վիրաւորել, անձնական հաշիւներ կար-
գադրել, կամ ինչպէս կըսեն, պղտոր
ջուրի մէջ ձուկ որսալ ուղղել է: Բայց
թող գիտցած ըլլան այդպիսիները որ
ինչպէս միշտ ասկէ վերջն ալ բոլոր
խոհուն ու լուրջ անձերու արհամար-
հանքին միայն պիտի արժանանան եւ

անպատասխանի մնան: Իսկ եթէ իմ
առաջարկս ընդունուի եւ ցոյց տրուած
ուղղութեան հետեւի, ապահով եմ
որ շատ օգուտ յառաջ կուգայ. հրա-
պարակի վրայ միայն ճշմարիտ քննա-
դատները կը մնան եւ գրուածներէն
կրնանք վերջապէս բան հասկնալ, ի
հարկին կրնանք նաեւ կարծիք յայտ-
նել, վիճել եւ այսպէս մեր հայեացնե-
րը լուսաբանելով կրթական որոշ ուղ-
ղութեան մը յանգիլ: Այն ատեն ա-
մէն մարդ կը գիտնայ իր ընկիւղը եւ
կը գործէ առանց տարակուսանքի, ա-
ռանց անստուգութեան. փափաքելի է
իմանալ թէ մեր մանուկներու դատը
պաշտպանող քննադատները ի՞նչ տե-
սակ փաստաբաններ են, անհասաւճ՞ր,
թէ վարժուած եւ չափազեւ: Տեսնենք
իրենց բռնելիք ուղղութեանէն եւ պաշտ-
պանելիք կարծիքներէն յայտնի կը լի-
նի:

ՀԱՅԱՍՏԱՆԻՍՏԻ ՄԸ ԱՌԹԻԻ Ա.

Ժամանակէ մը ի վեր է խմբա-
գիրներու—գործիչներու (յարգելի
բացառութեամբ) եւ կամ Տէրտէրի
—վարժապետի հրապարակային կը-
ռիւններն են լրագիր ընթերցողնե-
րու ժաշակած սնունդը, որմէ հայ
ժողովուրդը գրեթէ թունաւորուե-
լու վտանգին մէջ կը գտնուի:

Խմբագիրներու-գործիչներու ի-
րարու դէմ մղած ատեւութեան
պայքարին բահանայի մը խառնը-
ւիլը գուցէ իւր կոշիկէն վեր նը-
կատուի, բայց գոնէ տէրտէրի
վարժապետի վէճի մը առթիւ մեր
խոնարհ կարծիքը յայտնել, յու-
սաւք անիրաւութիւն չպիտի հա-
մարուի:

Ֆիլիպպի տակնուվրայութեանց
մասին (ընդունուին երեսը ճերմակ),
թերուդէմ կարգալէ ա՛յլ եւս զը-
զուած էինք: Ասոր յաջորդեց Սի-
լիստրէի վարդանանց հանդիսին
պատմութիւնը. քիչ ետքը մէջտեղ
կաւ սոյն հանդիսին հերոս վար-
ժապետին լացի գիշեր եկեղեցւոյ
մէջ դամբանական-քարոզ, եւ կամ
ինչ բառ ուղէք նէ դուք գտէք,
խօսելու եռանդը, իրեն բոլոր հե-
տեւանքներով: Որ եւ է թիւր մեկ-
նութենէ ազատ մնալու համար
կանխեմ ըսելու թէ ինձ հաւասար
անձանթ անձեր են յօդուածիս ա-
ռարկայ եղող վարժապետն ալ, տէր-
տէրն ալ:

Նախ խնդիր վարդանանց հան-
դիսին վրայ է: Մենք Պ. Սէթի
այն ատեն խօսած ճառին ունկըն-
դիր չենք եղած, ոչ ալ զայն հրա-
տարակեալ տեսած ենք՝ որպէս զի
բառ առ բառ հետեւելով անոր, մեր
գաղափարը յայտնէինք: Բայց ո-
րովհետեւ իրաւունքի 41 թուին
մէջ կը կարգացուի իր դաւանու-
թեան հանգանակը, ատոր վրայ
հիմնուելով միայն պիտի յայտնենք
մեր կարծիքը: Պ. Սէթ է եղեր
նախ վարդանանց, ապա վաւա-
կապաշտ: Կրնայ նաեւ ուրիշ պարզ
կամ բարդ բառերով զարգարուած
ողի մը կրել: Այդ մասին բնաւ
ըսելիք մը չունինք: Հաւատաքըն-
նութեան դարու մէջ ալ չենք. ա-
զատ է իւրաքանչիւր ոք ամէն բա-
նի մէջ իւր մասնաւոր կարծիքը
կամ հաւատը վայելել:

Այլ երբ վարժապետ է մէկը,
նա իւր անձէն վեր պարտաւորու-
թիւններով շրջապատուած է. սահ-
մանէն դուրս ելնելը չէ թէ միայն
իր իրաւունքը չէ, այլ մասնաւոր
իրեն կոչուած պաշտօնին նուիրա-
կան շրջանակը ճանչնալ իր սրբա-
զան պարտքն է:

Իմացանք թէ Պ. Սէթը՝ փար-
պեցի կորուսն, Եղիշէ կարգացած,
Քարաքաշեանի ընն. պատմութիւնը
ուսումնասիրած, Օրմանեանէն եւ
Դուրեանէն քննադատական դասեր
առած, վերջապէս Նոր կեանքի
մէջ Զօպանեանի լուրջ բանասիրա-
կանը տեսած է եղեր:

Այսու ամենայնիւ՝ այս բոլորը
եւ այս բոլորի վրայ աւելցած եւս,
ւնեւալիք ուրիշ փաստեր դեռ չեն
զօրեր վարդանանց սխալի յիշա-
տակը վասակի մը փաստաբանու-
թեամբ պղտորելու: Իրեն յիշած
գիրքերը այսօր նոր չեն ելած ի-
ւրյս, ոչ ալ Քարաքաշեան իր ընն.
պատմութիւնը միայն Պ. Սէթի
ականջին փսփսացած: Իրմէ զատ
դեռ ուրիշ շատեր կարգացած են
զանոնք, եւ անոնցմէ դեռ շատ ա-
ւելին, սակայն ոչ ոք մտածած է
վարդանանց խնկելի յիշատակի
հանդիսէն ճաճանչ մը խելույթան-
դըզնիլ ի նպաստ վասակի, եւ այն՝
հասարակ ժողովրդեան եւ նախա-
կըրթարանի մը նորածիլ աշակեր-

տաց առջեւ : Վարդանանց հան-
գեցը վասակը փառաբանելու օրը
չէ : Պ. Սէթ կարող է մինչեւ իսկ
իրեն համախոհներ ճարել և վա-
սակին երկրպագելու համար յա-
տուկ հանդիսաւոր օր մը առա-
ջարկել անոնց : Ոչ ոք կը հակա-
ռակի իրեն . . . միայն թէ մանկ-
տեսց վարժարանի մը սեմէն ներս
չէ : ուր աշակերտք վարդանանց
սուրբ ոգւով անանելու համար կը
յաճախեն , և ոչ ալ վարդանանց
անմահ յիշատակին նուիրուած օրը ,
յորում հայ ժողովուրդը նոյն սուրբ
եռանդով ոգեւորուելու պէտքը և
իրաւունքը ունի :

Քննական տեսութիւնները ո՞վ
կարհամարհէ . նոքա լոյս կը սըփ-
ռեն , այո՛ , բայց այն ատեն , երբ
արդէն մտաւոր բաւական պաշար
մը հիմնապէս ձեռք բերուած է ,
և ոչ թէ տհաս մանկանց և հասա-
րակ ժողովրդի առաջ : Գարագաշ-
եան մը իր քնն. պատմութիւնը
հրատարակելէ յետոյ վարժարանաց
համար գրած է հայոց պատմու-
թեան դասագիրքը , ըստ ընդու-
նուած ուղղութեան : Վիէնայի ,
Վէնէտիկի՝ պատմական հետազո-
տութեանց այդ բովերու , վարժա-
րանաց նախակրթական մասերու
մէջ հայոց պատմութիւնը կաւան-
դուի ըստ ընդհանուր ծրագրի .
վերջապէս Օրմանեանը և Դուրեա-
նը՝ մին Մետոնեան միաբանու-
թեան՝ իսկ միւսը Պարտիզակի
նախակրթարանաց մէջ կը դասա-
խօսէին հայոց պատմութիւնը ըստ
Եղիշէի ուղղութեան , իսկ Պ. Սէթ
մը՝ այս փաստացի ճշգրտութիւնները
ի հարկէ գիտնալով՝ և միմիայն
Սրմաշու վանուց ե՞րբորդ թէ չոր-
րորդ դասարանի մէջ մի քանի քնն-
նադատական կամ ուսումնասիրա-
կան դասեր կլլած ըլլալուն վերայ
յենելով՝ վարդանի տօնի օրը վա-
սակը բարձրացնելու ելնելը արտա-

կարգ չէ՞ք գտներ : Իրաւանց բըռ-
նաբարում չէ՞ այս :

Քննական ուսումնասիրութեան
ասպարէզը կարգ մը ուսման դեռ
առաջին աստիճաններու վրայ դե-
գերող յաւակնոտներու ըմբռնածէն
չա՛տ աւելի լայնածաւալ է , ուր ամե-
նահայկաւոր քննադատներ խորին
երկիւղածութեամբ հազիւ կը հա-
մարձակին փոխել իրենց քայլը ,
գիտնալով անշուշտ՝ թէ այս օր-
ուան հաստատը վաղիւ անստոյգ
երեւալու վտանգէն ազատ չէ միշտ :
Վարդանանցի և վառախալուչու
պաշտամունքի մասին այս է մեր
խոնարհ դիտողութիւնը :

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վառնա 17 յունիս

Ոչ ժամանակ և ոչ փափկանը-
կատութիւնս կընրէ որ ընթեր-
ցողները ձանձրացնելու չափ եր-
կար նամակով մը Շարժուի խմբա-
գիրներուն բերնին չափը տամ :
Միայն թէ իրաւունքս է , կար-
ծեմ , հարցնել իրենց թէ ի՞նչպէս
կը համարձակին փախուստ տալ
գործադրելէ իրենց այն բերանացի
և գրաւոր խոստումները , զոր տը-
ւած են՝ օրինական պատիժէ ազա-
տելու համար իրենց վտանգած ան-
ձը , Պ. Թահմիսեանը :

Ինչպէ՞ս փախուստի միջոց չի
նկատել իրենց այն յայտարարու-
թիւնը (վկաներ կան) թէ կը զգու-
շանան իրենց ձեռագիրը յանձնե-
լէ իրենց հակառակորդին , ինչ որ
վտանգաւոր կերեւար իրենց : Այդ
վտանգին առջեւն առնելու միջոց-
ները չէին պակսիր . այդ չըմբռ-
նելու համար պարոնները չատ տը-
ղայամիտ ըլլալու էին : Սակայն
գիրքը վարանցնող կէտը իսկա-
պէս այդ չէր , այլ պարզապէս սա-
ստուգութիւնն էր որ եթէ , ինչ-
պէս իրենցմէ կը պահանջուէր , իրը

միակ միջոց Պ. Թահմիսեանը ա-
զատելու , Պ. ճգնաւորեանը դա-
ւաճան և իր գրութիւնները ազ-
գագաւ յայտարարող թուղթ մը
ստորագրէին ու ինձ յանձնէին ,
այն պատենչը որուն հաւեւ պահ-
ուելու իրենց հարուածները ար-
ձակեցին , պիտի ինար և իրենք
պիտի ստիպուէին կուրծք տալ ըս-
պառնացող հակահարուածներուն :

Այդպիսի թուղթ մը տալու ա-
ռաջարկը ըրի իրենց 20 օր ա-
ռաջ . առկէ ի վեր միշտ խուսա-
փողական դիրք մը բռնեցին և ի-
րենց այս օրուան թերթով կու-
րան յայտարարել թէ իրենք պատ-
րաստ են թուղթը ստորագրել ,
թէ ես չեմ գնացիր վերջին ան-
գամ գիրքի տեսնել և թէ կըս-
պասեն եղեր մինչեւ այսօր :

Ահա ստոյգ եղելութիւնը .
Ամսոյս 10 ին առաւօտը Շար-
ժուի խմբագիրները իրենց խմբ-
բազրատան մէջ ինձ խոստացան
«անգամ մը եւս խորհրդակցելով
իրենց փաստաբանին հետ , գիտ-
նալու համար թէ այդպիսի թղթի
մը յանձնումը իրենց վնաս կը բե-
րէ՞ թէ ոչ» ինձ հաղորդել ի-
րենց վերջնական որոշումը : Հա-
մաձայնեցանք որ հետեւեալ օրը
7.7 1/2 իրենց խմբագրատունը եր-
թամ գիրքի տեսնելու : Գնացի
որոշեալ ժամանակին , ինչ որ պատ-
րաստ եմ վկանելով հաստատելու ,
սակայն իրենց «կոնակի վրայ բաց
դուռը» «երեսի վրայ գոց գտայ» :
Գոց դուռը մերժման ամենէն
նախատական ձեւը նկատուելու ի-
րաւունքս ոչ ոք կընայ ինձմէ
կապտել . ես ոչ իրենց գեղեցիկ գի-
նետուններուն աշկերտն էի , ոչ ալ
իրենց խմբագրատան աւուղը :

Պ. Թահմիսեանը ազատելու և
վերջ մը տալու համար իրենց ազ-
նուութեան մասին կասկածողնե-
րու աննպաստ ենթադրութեանց ,

ես միջամտեցի , մինչեւ վերջին ժա-
մը աշխատեցայ և վազվզեցի ուր
որ պէտք էր : Սակայն այսօր
ստիպուած եմ յայտնել թէ ես զի-
րենք ազնիւ ընկելու գերբնական
կարողութիւնը չունէի :

Եթէ կուզէին իրօք ազնիւ ըլ-
լալ , միթէ չէին կրնար ստորագ-
րուած թուղթը անձամբ բերել
ինձ , կամ ուրիշ մը միջոցաւ զըր-
կել ինձ , կամ վերջապէս՝ 5 սան-
թիմից բուլ մը վրան փակցնելով
փոստային յանձնել :

Ինչպէ՞ս կրնան ինձ հաւատացնել
որ իրենց գնացած պահուս իրենց
թաքստարանէն զիս դիտած չըլ-
լան . և ինչո՞ւ մտքէս չանցնում որ
բարեկամներս , զորս այսօր իրա-
պէս ճանչցած եմ , իմ մեկնումէն
ետքը զիրար շնորհաւորած են
«Օ՛խ , այս փոթորիկն ալ անցու-
ցինք» ըսելով :

Որոշեալ ժամադրութեան պա-
հուն իրենց դուռը գոց գտնելէ և
անկէ առաջ ալ ապարդիւն ջան-
քեր ընելէ ետքը , ինձ ուրիշ բան
չէր մնար եթէ ոչ Պ. Ճգնաւորեա-
նի յայտարարել թէ խոյս կուտան
պահանջուած թուղթը ստորագրե-
լէ : Այդ իմ իրաւունքս էր և գո-
ծադրեցի :

Վերջապէս Շարժուի վերջին
թիւը հիշելէ ետքը՝ ուր կը յայտ-
նէին թէ պատրաստ են պահանջ-
ուած թուղթը յանձնելու , ինչու
համար մերժեցին ստորագրել ի-
րենց առաջարկուած բանաձեւը ա-
նոր տեղը իրենք խմբագրելով ա-
նիմաստ , նոյն իսկ դատ բանալու
իրաւունքը Պ. Ճգնաւորեանին ձեռ-
քէն վարպետութեամբ մը խելու
սահմանուած գրութիւն մը , զոր
նոյն պարոնը բնականաբար մեր-
ժեց ամենայն իրաւամբ :

Թ. Յ. Թօփալեանց

Վառնա 17 յունիս

Այս օրուան 37. թիւ Շարժու-
ւի «Երկու խօսք» վերնագրով յօ-
դուածին մէջ թերթին խմբագիր-
ները յայտարարած են թէ ես իւր
թէ զղջացած ըլլամ այն հերքմանգ-

ՍԱՐԿԱԻԱԳ
(12)

է .

Այդպէս ահա հիմնելով տեղական
յանձնաժողովներ եւ ներշնչելով նոցա
վերոյիշեալ կանոնադրութեան ուղղու-
թիւնը , Լիվսկին ամենաարթուն կեր-
պով հետեւում էր ինչպէս գործի ընդ-
հանուր ընթացքին , այնպէս եւ մաս-
նաւոր յանձնաժողովների գործունէու-
թեան (*) : Ոչինչ , նոյն իսկ ամենա-
չնչին բան , չէր խուսափում նորա
ուշադրութիւնից . առհասարակ դիտե-
լու եւ հսկողութեան մէջ նա ցոյց էր

(*) Աւելորդ չէ յայտնել թէ ովքեր էին
կազմում այդ բազմաթիւ յանձնաժո-
ղովները և ի՞նչ մարդիկ էին մասնա-
կացում եւ առաջ տանում այդ հսկա-
յական գործը : Ամենամեծ մասը կազ-
մում էին ժողովրդական ուսուցիչնե-
րը , գիտական ֆանասմեքեր , առեւ-
տաւորներ և հասարակ անգրագիտ
գիտացիներ : Ամենափչ շարքառու-
րեալը այդ բոլոր յանձնաժողովների
կառավարութիւնը գտնուում էր ամե-
նասուրիւն աստիճան եւ դիտք ունեցող
մարդիկների ձեռքում :

տալիս զարմանալի ժրջանութիւն :
Առանց չափազանցութեան նորա մա-
սին կարելի է ասել որ նա ամեն տեղ
էր եւ ոչ մի տեղ չ'կար : Ըստ մեծի
մասին նա բոլորովին անակնկալ կեր-
պով յայտնուում էր այս կամ այն տե-
ղական յանձնաժողովում եւ անմիջա-
պէս սկսում էր վերստուգել նորա հա-
շիւները եւ գործերը : Բաւական էր որ
նորա ականջն հասած էր թէ այս ինչ
տեղը գործերը փոքր ինչ վատ են ըը-
նում եւ կամ որեւիցէ վտանգ է ըս-
պառնում գործի կազմակերպութեան
եւ ահա նա կարծես գետնի տակից
բանում էր այդտեղ եւ յորդորելով ու
ոգեւորելով բոլոր «համախոհներին»
վերջ էր գնում անհամաձայնութիւն-
ներին , փարատում էր տարակուսանք-
ները , առնում էր սպառնացող չարիք-
ների առաջը եւ ազատում էր այս կամ
այն գործիչին իւր վտանգաւոր գրու-
թիւնից : Պատահում էր որ տեղական
գործիչները անկարող էին լինում եւ
կամ չէին վստահանում կատարել կեդ-
րոնական յանձնաժողովի այս կամ այն
ձեռնարկութիւնը եւ կամ հրամանը
այդ ժամանակ Լիվսկին ինքն անձամբ
չտապում էր այդտեղ եւ գործը առաջ
էր գնում : Երբեք բռնուած բաղմա-
թիւ գործերով , որոնց համար հարկա-

ւոր էր նորա ներկայութիւնը զանա-
զան տեղերում՝ նա , ինչպէս ասում
են , պարտաւորուած էր լինում մի քա-
նի կտոր լինել և կրկին իրեն ամենա-
կարճատեւ հանգստութիւնից : Երկի
նորան տեսել էին Բուլղարիայի մէկ
ծայրում , այսօր յանկարծ յայտնուում
էր բոլորովին ուրիշ ծայրում , իսկ
վաղը նա սլանում էր դարձեալ մի այլ
տեղ . . . Առհասարակ , պէտք է ասել ,
որ նա՛ էր գործի իսկական հոգին եւ
որ նա համարեա՛ միայնակ էր իւր ու-
սերի վերայ բարձած տանում այդ ան-
տանելի ծանրութիւնը : Ո՛չ նորանից
առաջ եւ ո՛չ նորանից յետոյ Բուլղա-
րիան չէ ունեցել այնպիսի գործիչ , ո-
րը կարողանար համամատուել նորա հետ
թէ՛ հոռնողով , թէ՛ կըքով , թէ՛ ան-
խոնջութեամբ , թէ՛ զարմանալի ան-
յողողողութեամբ , թէ՛ կառավարչական
հարուստ ընդունակութեամբ եւ թէ՛
համողելու , ոգեւորելու ու մարդիկ
յափշտակելու տաղանդով . . .

Այս պատճառով էլ ազգային գործը
նորա առաջնորդութեամբ այնպէս էր
եռում՝ եւ առաջ գնում , որ գերա-
զանցում էր մինչեւ անգամ հայրենա-
սէրների ամենայնապիւղով յոյսերը՝ նո-
րա հօգու ձեռքով ստեղծած եւ հաստա-
տած կազմակերպութիւնը , որի գլուխն

էր կեդրոնական յանձնաժողովը , կարճ
ժամանակում տարածելով իւր բազմա-
թիւ ճիւղերը ամբողջ Բուլղարիայում ,
այժմ արգէն ամենայն իրաւունքով կա-
րող էր անուանուիլ «Բուլղարիայի առ-
ժամանակեայ կառավարութիւն» : Այդ-
պիսով այն՝ ինչ որ տարիւղական առաջ
միայն երեւակայաբան էր , այժմ ար-
դէն իրականութիւն էր դարձել : Այդ
զաղանի կառավարութեան ահագին բա-
րոյական եւ նիւթական ոյժը արդէն
զգալի էր ամեն մի քայլափոխում .
բուլղար համախոհները պարծենում էին
որ պատկանում էին այդ զաղանի հիմ-
նարկութեան եւ միեւնոյն ժամանակ
վախենում նորա անկախութեան խստու-
թիւնից աւելի քան թէ տաճկաց կա-
ռավարութիւնից : Եւ այդ ամենը կա-
տարել էր միայն մի մարդ , եւ այն էլ
համարեա՛ թէ ոչնչից , կատարել էր
ամենադժուար հանգամանքների եւ
պայմանների մէջ , երբոր նորա անձին
եւ նորա ձեռնարկած գործին ամենայն
քայլափոխում սպասում էին սարսա-
փելի վտանգներ . . . Վասիլ սարկաւա-
զը կատարեալ կարագիտ էր ազատու-
թեան . նա՛ էր որ մշակեց հողը , հար-
թեց ճանապարհները եւ ցոյց տուեց
թէ ի՞նչպէս պէտք է գնալ այդ ճա-
նապարհներով , այնպէս որ ապագայ
գործիչների աշխատութիւնը համեմա-
տաբար շատ աւելի հեշտ էր . նոցա
մնում էր միայն , նպատակին հասնե-
լու համար , շարունակել էր , ինչ որ
Լիվսկին արգէն սկսել էր :

րոյն համար, զոր տեղական հայ թերթերու տուած եմ թիւ 14 Շարժումն «Հայ դաւաճան մը» վերնագրով յօդուածին նկատմամբ: Ասիկայ սուտ մըն է, զոր այսօր մէջտեղ կը նետեն: Ուստի, ներկայիւ կը յայտնեմ բացարձակ կերպով թէ զղջացած չեմ տուած հերք: Գրագրոյս համար ե կը կրկնեմ թէ Տ. Ճգնաւորեանը դաւաճան կոչելու համար ոչ միայն չօշափելի, այլ և ունի փաստ չիկայ:

2. Թանկութեան

ԼՐԱՔԱՂ

Նոր-կեանքի մէջ կը կարգանք. Բարիկէն կը գրեն մեզի:

Երէկ գիշեր, (8 յունիս, չորեքշաբթի), Էնտրի սրահին մէջ, Վահրամ Սվաճեան տուած իր երկրորդ բարիկէն նուագահանգէսը, որ գեղարուեստական խնջոյք մը եղաւ հանգիստական ներուճ համար եւ յաղթական յաջողութիւն մը իրեն:

Հակառակ եղանակին բաւական յառաջացած ըլլալուն, խուռն բազմութիւն մը եկած էր ունենալով հայազգի արուեստագէտներ: Եւ իրանգովաւ հասարակութեան մը առջեւ, երկու ժամ անընդհատ, Սվաճեան զարկաւ ամենադժուարին կտորներ՝ նուրբ ու խափափաք արուեստով որ իրեն յատուկ է: Հիշանալի ճկունութեամբ, երաժիշտը կը կերպարանափոխէր իր ձեւն ու ոճը՝ կտորին համեմատ, լայն ու վեհ՝ Պէթովէնին հետ, Բուպէնշթայնին հետ՝ արտակարգ ու բուռն, լալազին ու դանդաղ կոտ՝ Շոքէնին հետ: Շուրջ պէտքէն հետ՝ չնարկալի, Շոքէնին հետ՝ տենդոտ, կոկիկ ու Լիսթին հետ՝ փոթորկալից, երկարատեւ ծափահարութիւններ կը պայթէին ամէն մէկ կտորին աւարտումէն յետոյ, եւ սքանչացման արտայայտութիւնները ամէնէն աւելի չեղտուեցան Պէթովէնի Անտանդէ անփախն, Բուպէնշթայնի Էդիւտ սիւս Է ֆօնտօթին, եւ Շոքէնի Պէուսէօզին: Եւ առաջին մասին վերջնալուծն, երեք անգամ ի տես կոչուեցաւ Սվաճեան սրտազեղ կեցցէներով:

Երկրորդ մասը կը բաղկանար «հայկական եղանակներով» զորոնք չարադրած է ինքն իսկ Սվաճեան: Այդ կտորները, ճիշդն ըսելով, զուտ հայկական ըլլալէ աւելի, քմածին խառնուրդ մըն են Արեւելեան ընդհանուր եղանակներու, եւ հայ են անով որ մերազնայ արուեստագէտ մը այդ ժողովրդական երգերու տարտամ մեղեդիները ժողոված, ընդելուզած, եւ անոնցմէ հանած է պզտիկ սիրուն երաժշտական քերթուածներ որոնք՝ եւրոպական նրբանուրբ ու կնճառ ձեւի մը մէջ՝ Արեւելքի անուշ միլամազձութիւնները կը թարգմանեն: Ունկնդիրները զմայլմամբ ընդունեցան այս զոդոր ստեղծագործութիւնները, եւ անոնցմէ մէկ քանին կրկնել տուին:

Հասարակութիւնը գրեթէ ամբողջապէս կը բաղկանար Եւրոպացիներէ, եւ Սվաճեանի յաջողութիւնը անոր համար նշանակաւոր եւ բերկառիթ է որ մեր հանճարեղ ազգակիցը կը գնահատուէր օտարներէ: Ծանօթ Ֆրանսացի գրագէտը, Ռոնի, որ ներկայ էր, սքանչացմամբ կը խոստովանէր թէ այդքան ուժեղ երաժշտական խառնուածք մը եւ այդքան դիւրաթեք ու խորին ըմբռնողութիւն մը տեսած չէր դեռ՝ ուրիշ ունէ զանազանարի քով: Ծանկելով կ'աւելցնէր թէ հայ մտքին այս փառաւոր յաղթանակին, Բարիկէի աչք զաղթականութիւնը կազմող 7.800

Հայերէն՝ քանակաւ հոգի միայն ներկայ էին...

—Վեհ. կաթողիկոսը Դաւրէթի քահանայ ընկի վանեցի Տէր Աւետիս Եպիսկոպոսին հրաման զրկելէ նոյն քաղաքի և շրջակայ գիւղերու մէջ հանգանակութիւն մը բանալ ի նպատակ վանի վարագայ Ս. Խաչի վանքին, որուն խուցերը և վարժարանի շէնքը քանդուեցան թուրքերուն ձեռքով, կոտորածին ժամանակ:

—Վերոյիշեալ քահանան հայրապետական կոնգրակով առաջ. փոխանորդ կարգուեց Սալմաստի:

—Տօքթօր փաշայեան մեծ ժողովրդականութիւն կը վայելէ Պարսկահայերուն մէջ՝ թէ՛ իւրեւրժիկ որ աղքատները ձրի կը դարձանէ, դեղերն ալ անոնց ձրի տալով, և թէ իւր ատենախօս՝ որ ժողովրդական լեզուով իր ունկնդիրներուն կը խօսի գիտական, օգտակար նիւթերու վրայ:

—Մոսկուայի հայոց եկեղեցիին շրջափակին մէջ ապաստանարան մը հաստատուած է «Գասպարեան անկեղանոց» անունով, ուր կը պատրաստուին այժմ աղքատ, անոք և ծեր հայ կիներ, որոնք կը ստանան թէյ, չաքար և ամսական 10 ական ուսուցիչ անունդի և հագուստի համար: Անկեղանոցը ունի սպասուհի մը որ կը հսկէ մաքրութեան և օրը երկու անգամ թէյ կը պատրաստէ պատուարեալներուն համար, իսկ կերակուրը ասոնք իրենք կը պատրաստեն իրենց ամսականով, որով ստիպուած են բաւականանալ:

Անկեղանոցի խորհրդին յանձնուած է հանգանակութեամբ գոյացած 19480 ուսուցիչ որուն տոկոսէն կրնան օգտուիլ չքաւոր հայ ուսանողներ: Այդ գումարին 5000ը ստորագրած են Ժամհարեանք, 3000ը՝ Հիշուգեան, 1500ը Լիւնոգեան, եւն:

—Միսիօնարուհի տիկին Հայտ Մ. Նահանգաց Նօրվիչ քաղաքին ժողովարաններէն մէկուն մէջ առանախօսելով հայերուն ինչ ինչ թերութիւններուն վրայ, բար է. «Շատ դժուար է այսպիսի ժողովուրդի մը մէջ գործել. բայց մը խիթարական կէտն այն է որ լուսաւորեալ հայերը սկսած են մեզի գալ թողով իրենց հին եկեղեցիին և այն աղջիկներն ու տղաքները որոնք մեր գաղութները կը յաճախեն, անպատճառ բողոքական եղած են և կըլլան օրէ օր»: Տիկին Պաուլա մը նոյն գումարումին մէջ պատմեց իր ղեկավարութիւնը զորս կը կրէր հայ կիներուն հետ ծանօթանալու համար: «Օր մը, ըսեր է տիկինը, սերիշ կին մը տեսնելու գնացինք, որ երբ մեզ տեսաւ, դուռը երեսնուս գոցեց, մեզ սատանայ կոչելով: Բայց կոտորածներէն վերջը, երբ սկսանք նպատակ բաժնել, այդպիսիները փոխուած գտանք: Նպատակ մեծ առիթ մը եղած է Սուրբ զիւրք տարածելու համար»:

—Կըսուի թէ կաթողիկոսը Տ. Յովսէփ վարդ. Սարաճեանը Ամբրիկա պիտի զրկէ իւրեւ ընդհանուր հովի:

—Տ. Պ. Թորոսեան Նիւ-Եռնքի Միացեալ աստուածաբանական վարժարանէն, իսկ Մարաշի Տ. Աւետիս Հիմնական Հարթֆըլտի Աստուածաբանական վարժարանէն շրջանաւարտ ելեր են:

—Ամերիկայեան քանի մը հայ

գաղութիւններ ցաւակցական հեռագիր զրկել են Տիկին Կրատսթոնի, իր մեծանուն ամուսինին մահուան առթիւ:

—Միացեալ Նահանգներու հայ գաղութներուն մէջ ալ չեն պակսիր բարոյական ապականութեան մարմնացումներ: Տիգրիս կը ծանուցանէ թէ Հիւսէյնիկցի Կօկօ անուն անուն մէկը Հարթֆըլտէն Հնչակ և ուրիշ ազատական թերթեր կը զրկէ եղեր խարբերդ հայու մը հասցէին՝ անկէ վրէժ լուծելու համար: Խեղճ մարդը մեծ դժուարութեամբ կը յաղթի օձիքը ապառնել կառավարութեան ձեռքէն: Կօկօ իր շար գիտաւարութիւնը կանխաւ յայտնած է եղեր նամակով մը որ բարեազդարար կը բռնուի:

—Ամերիկայեան ազգային մը, բոֆ. Պ. Թաթարեան, կառավարէ որ Ամերիկայի բոլոր հայ կառավարները առանձին խումբ մը կազմեն որ վերաբերի որոշ բանակի մը:

ԱՂԳ

Աղգ. երկսեռ վարժարանաց եւ աւանդալ շրջանի հրապարակային բնութիւնը կը սկսին ամսոյս 21ին և կը տեւեն մինչեւ 29:

Քննութիւնը տեղի կունենան մանչոց վարժարանին մէջ, առաւօտեան ժամը 8 1/2-12, և յետ միջօրէի՝ 2-6: Իսկ կիրակի օրերը առաւօտեան ժամը 9 1/2-12 և կէս օրէ վերջ՝ 2-6:

Շաբաթ, 27 Յունիս, մանկապարտէզի բնութիւնը՝ 9-12:

Ստիպողաբար կը խնդրուի կըրթի մասեր հասարակութեան՝ որ բարեհաճ իր ներկայութեամբ քաջալերել ուսանողութիւնը՝ իր առաջին քայլերուն մէջ:

Տնօրէնութիւն

Աղգ. երկս. վարժարանաց վառնայի վառնա, 16 Յունիս 1898

Ծանօթ.—Մասնաւոր հրաւերագիր զրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայ ազգաբարութիւն իւր այն նկատել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բրուսիոյ Հայերի իշխանին Ծայրագոյն Արեւելքէն վերագործին թուականը դեռ որոշ չի գիտցուիր: Առաջ կըսուէր թէ իր ճամբորդութիւնը տարի մը պիտի տեւէ, որովհետեւ Չինէն յետոյ պիտի այցելէր նաեւ Ճապոն Սա. կայն Յանքի Յոնքի Յոնքի Յոնքի մասնաւոր թղթակիցը կը հեռագրէ թէ իշխանը հրաժարած է Ճապոն երթալու գիտաւարութեանէն, որովհետեւ կը վախճուի եղեր որ իրեն դէմ ալ մոյրեանք ընկնէր դաւ մը լարեն, ինչպէս քանի մը տարին առաջ Չարիվիչին ըրին: Այս պատճառը չատերուն անհիմն կերեւայ: Կը կարծուի թէ գերմանական քաղաքական ծրագիրներուն Ճապոնի մէջ անյաջողութեան հաւանականութիւնն է որ թեւազորմէ և Հայերի իշխանը Չինէն ուղղակի Գերմանիա վերադառնալ:

—Վնասի հատուցման խնդիր մը երկար ժամանակ վէճի եւ ապարդիւն բանակցութեանց առիթ եղած էր Ռուսիոյ եւ Անգլիոյ միջեւ: Անգլիա կը պահանջէր զըրամական հատուցում գանատական բանի մը նաւերու համար, զորս ուսական իշխանութիւնը

բռնած էին, առարկելով որ Ռուսիոյ վերաբերող ջրերու մէջ որսորդութիւնը եղած էին: Երկու կողմէ վարութիւնները համաձայնեցին վերջապէս վէճը նիւթարկել նշանաւոր իրաւագէտ եւ Պրիւսէի համալսարանին ուսուցիչ Տ. Ալֆօնս Ռիվիէի իրաւաբարութեան: Իր վճիռը, ինչ որ ալ ըլլայ, երկու կողմէն պիտի ընդունուի առանց առարկելութեան:

Երբ պիտի դայ այն օրը ուր կառավարութիւնները քաղաքական խնդիրներու լուծման համար ալ դիմէին չեղոք, ձեռնհաս և յարգելի անձերէ կազմուած դատարանի մը վճիռին: Մարդկութեան համար ոսկի տարագրուի մը պիտի բացուէր այդ օրը:

—Աւստրիական կառավարութիւն դեռ չի յաջողեցաւ կաշիցիոյ մէջ գաղութները հակահրէական շարժումը: Լեհ ժողովուրդը կը շարունակէ տեղ տեղ կողոպտել ու այրել հրէաներու տուններ ու խանութներ:

—Ֆրանսայի արտաքին գործերու նախարարութեան Շանկայէն հասած հեռագիր մը կիմացնէ թէ Բէքինէն Հանքօ երկաթուղի մը շինելու արտօնութիւնը տրուել է Ֆրանսեւ պէթ խմբակի մը:

Եթէ խեղճ չինացիները շարունակեն իրենց այս զիջողական ընթացքը եւրոպայի անյադ տէրութիւններուն հանդէպ, քանի մը տարուան մէջ այնքան արտօնութիւններ, իրաւունքներ, առանձնանորհուսներ տուած պիտի ըլլան որ իրենց բան մը չի պիտի մնայ:

—Նախարարական տաքսապը վերջ չի գտաւ դեռ ոչ Ֆրանսայի և ոչ Իտալիոյ մէջ: Ֆրանսական հանրապետութեան նախագահին հրաւերով նոր նախարարութեան մը կազմութեան ձեռնարկողներ անյաջողութեան դատապարտուելով՝ իրարու ետեւէ ստիպուեցան ձեւաւորութիւն ըլլալ: Հիմայ Պրիւսն է որ կաշխատի համախոհ պաշտօնակիցներ գտնել և կըսուի թէ իր բանակցութիւնները յաջող արդիւնքի մը յանգեցուցաւ հետեւեալ խարարչունքը, որոց պաշտօնակցութեան գիմում ըրած է, պայման դրել են որ Սահմանադրութեան վերաբնութեան խնդիրը առայժմ մէկ կողմ ձգուի, Տրայֆուս-Էսթէրհազի խնդրին մէջ կառավարութիւնը ամէն հակառակորդներու դէմ յարգել տայ բանակին անունը եւ դատարանին վճիռը, և յուլիս 1էն սկսեալ վերահաստատուի ցորենի մաքսը:

Իտալիոյ մէջ ալ, ուրիշներու ապարդիւն ջանքերէն ետքը, զորս պետ Բէլու ստանձնած է նախարարութիւն մը կազմելու պաշտօնը, զոր կըսուի նոյնպէս թէ յաջողութեամբ գլուխ պիտի հանէ այսօրեր:

—Տրագոնի վիլայէթին Չաբուլու գիւղին թրքահայտակ 35 յոյն ընտանիքները ազերսագրով մը խնդրել են ուս կառավարութեանէն որ իրենց թոյլատրէ կողմ կաս գաղթել, կարս գաւառը, կամ թուրքիոյ սահմանին մօտ ուրիշ տեղ մը:

—Օտարահայտակներ չեն կըրնար մտնել Բէթէրսպուրկի դիմուորական թշկական ճեմարանը: Սակայն կառավարութիւնը բացառաբար արտօնած է պուլկար, սերպ և Մօնթէնէկրօի հպատակները յիշեալ վարժարանը յաճախել:

ՄԻՒԹԵՆԵՎ ՎԻԵ

Սթանպոլ Ռուսիա սեփրի յի. Զինավիճակ տեօրտ կիւն ագտեմ երլտըզ սէրայընտա թաամ իթմիշ վէ պատէհու Սուլթան իլէ միւլա. գաթտա պուլունմըլ տըր :

— Թաւնըն Սթանպոլտան ալտը. զը պիւր թէլէկրաֆա կէօրէ՝ Ֆը. րանսա, Ռուսիա, իթալիա վէ ին. կիլթէրա պէյնիտէ կիրիտ մէսէ. լէսի հազգընտա իթթիֆազ հու. սուլէ կէլմիշ օլուպ, մէսէլէյի թէ. ֆէրուաթըլէ հալ իթմէք իչիւն, Սթանպոլ սեփրիլէրի թալիմաթ գապսւլ, վէ պու. սէպէպլէ յունիս 15 տէ պիրիւնի տէֆա օլարագ պիր միւլաքէրէ իթմիշլէր տիր :

— Եթմէնտէ ասայիշին պէրքէմալ օլտուղը Սթանպոլ հալատիսաթըն տան տըր :

— Էրմէնի գըրկընը էսնասընտա կէրէք Սթանպոլտա վէ կէրէք վի. լայնթլէրտէ զարարտիտէ օլան ֆըրանսըզ թէպաալարընա թազ. մին օլընաճագ մէպլաղըն թէ. տիյէսինի ֆըրանսա սեփրի Պա. պը Ալիտէն եէնիտէն թալէպ իթ. միշ տիր :

— Սեբպիա գըրալը բէտէրի սա. պըզ գըրալ Միլան Էպրոքատան Պէլկրատա ալտէթիւնտէն վէ պա. խուսուս Սեբպիա օրտուսը ումու. մը գօմանտանը նասպ օլունտըգ. տան պէրի Սեբպիանըն րահաթը պօզուլտը, Էհալինին էքսէրիյէ. թի րատիգալ ֆըրգասընա մէն. սուպ օլտուղը հալտէ, Գըրալ Մի. լան իսէ տալիլի իչլէրտէ լիպէ. ռալ ֆըրգասընա վէ խարիճի բօլի. թիգատա Աստրիայա մէյալ տըր վէ մէմէքէթ իչլէրինի քէնտի էֆ. քեարլարընա կէօրէ չէվիլմէք էմէ. լինէ խըզմէթ իտէյօր, Գըրալնախի. րէն Ռուսիա էչլիսի չէրէֆինէ վէր. տիկի զիյաֆէթտէ հազըրպուլուն. մամագ իչլին, գըրալ Միլան կէօ. յա մէմուրիյէթի իգթիգասընտան աճէլէթէն տիկէր պիր մահայէ կիթ. մէյէ մէճպուր օլտուղըն պէհանէ իտէրէք, զիյաֆէթտէն իքի սա. աթ էվիլ Պէլկրատտան մուֆա. րագաթ իթմիշ տիր : Սեբպիա օր. տուսը պաշ գօմանտանըն շու հա. րեքեաթը Պէլկրատ մէհաֆիլի սի. յասիյէսինտէ թէաճուպ վէ հէյէ. ճանա սէպէպիլէթ վէրմիշ տիր :

— Սթանպոլ թըպիլէ մէքթէ. պինի իսլահ իթմէք մէմուրիյէթի Ալման թապիպլէրինտէն տօքթօռ Ռիտէրէ իհալէ օլունմուշ տըր :

— Սանատան պիլտիլիտիկինէ կէօրէ՝ Եթմէն իսլահաթ գօմիսիօնը չէհրի մէզըրէրէ վասըլ վէ մէմու. րիյէթինէ մուպաշէրէթ իթմիշտիր :

— Ալմանիա վէ Աւթըրիանըն րուսիայա հէմէֆքեար պուլըն. մալարը իչիւն բրէնա Եօրկիտըն նամզէտիկինի պէրթարաֆ իտիլ. միշ տիր : Հալպու քի՝ կիրիտ ու. մուսի մէճլիսի՝ առատա թէշըլի օլունաճագ մուվագգաթ իտարէ. տէն սօնըա, նիհայէթ բրէնա Եօր. կիտըն վալի նասպ օլունմասը իլէ

կիրիտ մէսէլէսինին քիւլլիյէն հալլ օլունապիլէճէկինի ամիրալարապէ. յան իթմիշ տիր :

ՏԱԽԻԼԻՅԷ

Բրէնա հազըրէթլէրի յունիս 12 տէ Սօֆիատան Էվքիսինօկրատա ա. զիմէթ իթմիշ տիր :

— Բրէնա վէ բրէնսէն հազարա. թընըն ալաֆը. յուլիս 6 տա Գէօս. թէնճէ թարիգիլլէ Սէնաիյէ ա. զիմէթլէ օրատա րումանիա գըրալ վէ գըրալիցասընա իքի կիւն միւ. սաֆիր գալաճագլարընը թաւն պիլտիրիյօր :

— Գուրիէ տէ Պալգանտա օ. գունտըղընա նազարէն՝ ախիւրէն եաղմըլ օլան տօլուտան Սթարա Զակօրա, Զիրբան, Նօվա Զակօրա վէ թունօվօ. Սէյմէնտէ 90ը միւ. թէճափուզ քէօյ թարլալարը վէ պաղարը խարապ օլմուշար տըր :

— Բրէնա սարայը սապըզ մէ. մուրլարընտան կ. Գալէվիշ կ. Ռա. տի իվանօֆ եէրինէ Պուկար վա. բօր գուլմանեաօր տիրէթթօրը նասպ օլունմըլ տըր :

— Կօլէմա—Ռաքօվիցա քէօյիւ միւթմէքիւրէրինտէն Զանքօ Անտ. րէնէֆնամ պիր շախստա օլանմաթ. լուպընտան տօլայը ալտըղը իլամը իճրա իթմէք իւզրէ իճրա մէմուրը իլէ պէրապէր մէզըրէր քէօյէ կիթ. միշ օլան Նօվօ. Սէլօլը ալօգաթ իվան Բանէֆ մէտեռնը թարա. ֆընտա պըշազլա գաթլ իտիլ. միշ տիր :

— Սեբպիա սինօրլարընտա Պուլ. կար վէ սըրպ պէքճի ասքէրիպէյ. նինտէ պիր միւսատէմէ վուգու պուլմուշ, վէ Պուկարիա իլէ Սեբ. պիա արասընտա մուխապէրաթ բէք կէրկիլէյմիշ վէ հաթթա մու. հարէպէ զուհուրինտէն գօրգուլ. մագտա օլտուղընա տայիր կէզմէք. տէ օլան շայէալարը նիմ բէսմի Միւր կաղէթասը քիւլլիյէն թէք. զիպ իտէյօր :

— Բօլիթիգաճա գապահաթըլը ատտ օլընան 35 պուկալար Սուլ. թան թարաֆընտան ալֆա նայիլ օլտուղլարը հասէպիլլէ, Էվգարգ հազըրէթլէրի՝ թիւրք հիւքիւմէ. թինտէն գօրգուլարընտան նաշի Պուկարիայա կէշմիշ օլան Պուլ. կար բարասլարա քէնտի մէմուրի. յէթ մահալլէրինէ ալտէթ իթմէ. լէրինի էմր իթմիշ տիր :

— Սօֆիատան թաւնա քէշիտէ օլունան պիր թէլէկրաֆ՝ Բրէնա հազըրէթլէրինին արզուսը մուճի. պինճէ, կ. Սթօլօֆըն պիր գաշ կիւնտէն Գաուլպատտան Սօֆի. ալա ալտէթ իտէճէկինի պիլտի. րիյօր :

— Նէշը օլընան պիր սթաթիս թիգ ճէալլէլինէ նազարէն՝ Պուլ. կարիատա 4480 մէքթէպը իպլի. տաի պուլունըյօր. պունլարտան 3138 Պուկալարա, 1284 իս. լամլարա, 39ը րուլարա, 13ը էր. մէնիլէրէ, 3ը ֆրանսըղլարա, 2սի

ուլահլար վէ պիրիսի րուսլարա ա. յիտ տիր :

Պու. մէքթէպլէր իչիւն հիւքիւմէ. թին սէնէվի մասրաֆը 8,260,067 լէվ տիր : Մէքթէպլէրտէ 6886 մուալլիմ, 1443 մուալլիմէ, 247060 էրքէք վէ 100840 զըզ շալիրտ մէվճուտ տըրլար :

Տիւն կիճէ ալաֆը. սաաթ 2 1/2 տա վարնատա Յարիկրացքա Ու. լիցատա թէրզի կ. Թըրաքիտի տու. քեանընտան գուհուր իտէն հարիգ. տէն կէրէք մէզըրէր տիւքիւն վէ կէրէք անա պիլիշիկ թէրզի կ. Սթօլքօֆ տիւքիւնը եանմըլ տըր : Իքի տիւքիւնտան տա հիչ պիր չէյ գուլթարըլմատը :

Մ Ո Ւ ՀԱՐԵՊԵ

Նիհայէթ ամիրալ Գամարանըն սահիհէն Գուպայա միւթէվէճի. հէն Գատիքստէն եօլա չըգմըլ օլ. տուղը աղնալըլմըլ տըր : Սմէրի. գա գօնսօլսընըն Մըսըր հիւքիւ. մէթինէ իթտիկի միւրաճատթ մու. ճիպինճէ, ամիրալ Գամարայա Մը. սըրտան քէօմիւր ալմաղա միւսա. առէ օլընմայաճաղընը պիր թէլէ. կրաֆ պիլտիրիյօր :

Գուպայա կիթմէք իւզրէ իւ. չիւնճի տէֆա օլարագ Ամէրիգա. տան ասքէր կէօնտէրիլմիշ տիր. սօն տէֆա Ս. Ֆրանչիսկօտան կի. տէնլէր 4000 քիշի տիրէր :

Ոռօրլտ կաղէթասընըն ալտըղը պիր թէլէկրաֆ՝ պէշ կիւն ագտէմ 300 Գուպալըլարըն իքի ամէրի. գա վարօռը իլէ Գուպայա կիթ. տիքլէրինի վէ օրատա գարայա չըգմըլ օլտուղլարընը պիլտիրիյօր : Սպանիալըլար սալա մուգալէմէթ իթմէքսիլին կէրի չէքիլմիշլէր :

Ալման Ռեօրի Մանիլա հա. լինտէ հիչ պիր թէպէտտիլաթ վուգու պուլմատըղընը, ասըլարըն իլէրիյէ իւրիւլիւ իթմէտիքլէրինի վէ Սպանիալըլարըն իսթիհքեամ ինշասը իլէ մէշղու օլտուղլարընը պիլտիրիյօր :

Քէզա Սանթիակօտա եէնի պիր վուգուաթ եօգ տըր :

Կէօյա Գանարիան առալարըն. տա Սպանիալըլար Ամէրիգալըլա. րա գարըլը գօյմաղա վէ անլէրի զալէպէ իթմէկէ քեաֆի գուվվէ. թէ մալիք օլտուղլարընտան, տիւշ. ման իլէ պիր կիւն էվիլ վուրուշ. մագ արզուսընտա վէ իտէճէքլէ. րի ֆիւթուհաթտան տօլայը չիմ. տիտէն սէվինճ տուլմուգտա ի. միշլէր :

ՍՕՆ ՀԱՎ ԱՏԻՍԱԹ

Ամիրալ Գամարանըն Սուէզտէն կէշմէսինէ միւսատա օլունմամա. սը հազգընտա Ամէրիգա վէ ին. կիլթէրա պէյնիտէ մուխապէրաթ վուգու պուլմագտա օլտուղընը Տէյլի Բօսք պիլտիրիյօր :

Իւշ սաը սէրքէրտէլէրի լէվա.

գիմաթը հարպիյէ իլէ Գուպատա Պէնիսէ եազըն գարայա չըգմաղա մուաֆֆաֆ օլմուշար տըր :

Թէնօր նամ՝ Սպանիա հարպ սէ ֆինէսի Ս. իօլ նամ պիր ամիրի. գա վարօռը իւզրէրինէ հիւճիւմ իթմիշ իսէտէ, Ամէրիգալըլարըն չիտտէթլի մուգալէմէթի սէպէ. պի իլէ կէրի չէքիլմէյէ մէճպուր օլմուշ տըր :

Ֆիլիբին ասըլարը վէ Սպանիա ասքէրէրի պէյնիտէ պիր մու. սատէմէ էսնասընտա ասքէր ասը. լար թարաֆընա կէշմիշ օլտուղըն. տան, Ժէնէռալ Բէնա տիւշմանա թէպիլմ օլմաղա մէճպուր օլտը :

25000 ասըլար Մանիլա էթ. րաֆընը սարմըլար տըր : Շէհրի մէզքիւրըն ալընտըղընա տայիր պունտան էվիլ զուհուր իտէն շա. յէա պի էսաս իսէ տէ, աղ վա. զըթտան ասըլար թարաֆընտան զապթ օլունաճաղընա տա չիւքի. գալմամըլ տըր :

ՉԱԽԻՐԻ ԲԻԱՑԱՍԸ

Վաւնա 19 Գունիս

Պուշտայ

Վալօն եօգլիպրա 47-51, հէքթօլ.

9.50-10 ֆրանք

Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.

8-8.50 ֆրանք

Արքա

Լիպրա 38-40, հէքթօլ. 4.80-5.20

ֆրանք

Ֆաստալա

100 օգգասը 15-20 ֆրանք՝ մալա

կէօրէ

Արապա մուամէլէսի՝ Նարօլէն

24 ֆու. հիսապը իլէ տիր :

Կիւնտէ 5-6 արապա պուղ.

տայ, 4-5 արապա արբա կէլմէք.

տէ տիր : Մըսըր եօգ տըր :

ԱՐՄԵՆԱԿ Ս. ՎԱՌՆԱԼԵԱՆ

Մասնագէտ-ուսուցիչ ձեռագիտութեան

Պատիւ ունի ծանուցանել Ար. գոյ հասարակութեան թէ պատ. րատ է գասեր տալ իգական սե. ռի յատուկ ձեւագիտութեան եւ իրեն աշակերտողներուն սորվեցը. նիլ առանց փորձի (բօսով) հա. գուստ պատրաստել նուրը ճաշա. կով, ֆափագողները պարտին գի. մել իրեն, 5րդ. թաղ, Բիլսըա փո. զոց, թիւ 334, անձամբ կամ քար. թով մը : 1-5

ՎԱՐՁՈՒ ՔԵՕՇԿ

Վաւնայի վալարա ալգիներուն մէջ Մանասթըրի ճամբուն վրայ, Թըրաքա չէշմէի և Էվքիսինօկրատի պալատին մէջտեղը քէօշկ մը, որ ունի խոհանոց, վրան երկու սեն. հակ, մէկ սրահ և հարիւրի չափ որթատունկ պարունակող ալգի մը, վարձու պիտի տրուի : Դիմել Տ. Սթէրիօ Գ. Բաթրիքօֆի, Բ. թաղ, պահանջողին գիմաց, թիւ 1449 :

Ա.Զ.Դ.

Իրաւունք կը ծախուի Ռու. ճուզ, բօստայի նախկին չէնքի գիմաց, Տիար Մ. Թիւթիւնճեա. նի խանութը :